



ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ ԱՐԺԵՊՍ. ՏԷՐՏԵՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԺ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱԿԵՄԻ

Ն. ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԱԾ «ՆԱՅՏԱ»ՅԻ Ա. ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Նախքան դէպի Եւրոպա պաշտօնական շրջապտոյտի մը ձեռնարկելը, Յորդանանի բարեխնամ Քազաուր Ն. Վ. Հիւսէյն Ա. հանցաւ Երուսաղէմի Պատրիարք Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեանի շնորհել «Նահտա»յի Առաջին Կարգի շքանշանը, որ վերապահուած է պետական բարձր անձնատրութիւններու, և որ կը տրուի շատ բացառիկ պարագաներու:

Շքանշանի տրուութեան արարողութիւնը կատարուեցաւ վարչապետ Ն. Վսեմութիւն Պահնաթ Թալիունիի ձեռամբ վարչապետարանին մէջ, Ամման, Շաբաթ, 19 Դեկտեմբեր 1964, կ. ա. ժամը 10.30-ին:

Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանային Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Ասլանեան, Ս. Աթոռի Դիւանապետ Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Անէմեան, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան, ինչպէս նաեւ Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Փապունեան և Հոգշ. Տ. Արշակ Արք. Խաչատրեան:

Խօսք առնելով, Պատրիարք Սրբազան Հայրը իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Ն. Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորին՝ այն բարեխնամ հոգատարութեան և ուշադրութեան համար, որուն կ'արժանանան Հաշիմական Քազաուրութեան քաղաքացիները, որոնց կարգին նաեւ քրիստոնէայ բոլոր համայնքները:

Ն. Ամենապատուութիւնը շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ն. Վսեմութիւն Պահնաթ Թալիունիի՝ Վեհափառ Քազաւորին և Հաշիմական Կառավարութեան իր մատուցած յոյժ գնահատելի և օգտակար ծառայութիւններուն համար:

Պատասխանելով, Ն. Վսեմութիւն վարչապետը շնորհաւորեց Ն. Ամենապատուութիւնը՝ «Նահտա»յի Ա. Կարգի շքանշանին արժանացած ըլլալուն համար, և ըսաւ որ Ն. Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւոր վերոյիշեալ շքանշանը շնորհած էր՝ ի գնահատութիւն Պատրիարք Սրբազանին կողմէ յօգուտ Յորդանանի տարուած աշխատանքներուն:

Սիրալիր և շերտ ընդունելութենէ մը ետք, Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Սրբազանը իր շքախումբով վերադարձաւ Երուսաղէմ: